ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«----» հոկտեմբերի 2010թ.** **N -Ա**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ Հայաստանի պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Մովսես Խորենացու շքանշանով պարգևատրված՝ Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը համարվող Երևանի Քանաքեռի 14-րդ փողոցի թիվ 38 շենքի 3-րդ հարկի հ.12 երեքսենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման/ իրավունքի գրանցման 03.09.2009թ. հ.2584303 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց (նվիրատվությամբ) օտարել Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին (անձնագիր՝ AK0520414 տրված 01.06.2010թ. 012-ի կողմից):

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Մովսես Խորենացու շքանշանով պարգևատրված՝ Ռոբերտ Գրիշայի Մլքեյանը Երևան քաղաքում որևէ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության իրավունք և ներկայումս իր կնոջ և երկու զավակների հետ միասին վարձակալությամբ բնակվում է Երևանի Ավան-Առինջ թաղամասի 3/6 շենքի հ.19 բնակարանում:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և Ռոբերտ Մլքեյանի՝ ազգային մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալից ավանդը՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին բնակարան հատկացնելու մասին:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ